

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ ԱՌԱԿԸ

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՅՆ ԳԵՐԱԶԱՆՑ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ



THE PRODIGAL SON

THE SUBLIME LOVE OF GOD THE FATHER

ԱՆՊԵՐ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1999

Գորտոպա, 21 Մարտ 1999

ՅԱՐԳԵԼԻ ՏԻԱՐ ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,

Գրեթէ հինգ տարիներէ ի վեր յատուկ ուշադրութեամբ կը կարդամ ու կը վերլուծեմ ձեր Սուրբ Գրային սերտողութեանց և խոհերուն արգասիքը հանդիսացող "Կանթեղալոյս" հոգեւոր պարբերաթերթի յաջորդական համարները, որոնք նուիրումով և խղճմտութեամբ կը պատրաստէք, հարստացնելով զանոնք՝ Հայ Եկեղեցւոյ և կրօնական աւանդութիւններու մէջբերումով:

Գիտութեան և աննախընթաց յառաջդիմութեան 20-րդ Դարու վերջին այս տարիներուն՝ մարդկութիւնը անձկանօք կը հետեւի հաղորդակցական միջոցներով, ժամը ժամին սփրտող հաղորդումներուն մերօրեայ աշխարհի գիտական, քաղաքական, տնտեսական լուրերուն. ակամայ շատ բաներ գիտնալու ստիպողութեան առջեւ կը գտնէ ինքզինք: Բայց միւս կողմէ կը ներզգայ ներքին հոգեկան պայակը:

Ոչ ոք կրնայ դրժել հոգիի գոյութիւնը. այն ներքին աննիւթական տարածքը որ աստուածադրոշմ է, և որ տեւաբար կը ձգտի բարձրագոյն արժէքներու. և իր Ստեղծիչին: Արդ՝ ամէն մարդ պարտի իր անձը քննել ու ներաշխարհին մէջ իւրտացող ձգտումներուն ձայնը իմանալ, և մշակել զանոնք: Անուանական բազմաթիւ քրիստոնեաներ, երբ աստուծոյ Խօսքին Լոյսին ներքեւ ինքնարժեւորումի փորձառութիւնը ունեցած են, իրենց էութեան ամբողջեամբը փարած են Աստուծոյ, և ամօթ չեն սեպած խոստովանելու անուանական քրիստոնեայ կեղծ շպարին ներքեւ անցուցած սնանկ տարիները:

"Քերովբէական Աթոռ Նստողդ Քրիստոս. Գթութեամբդ Բարեհաճիր Նստիլ մեր Հոգիներուն Մէջ" (շարական աղուհացից 6-րդ Կիրակի), այսպէս հաւատացին, և հաւատք ներշնչեցին մեր հոգեւոր հայրերը Հայ ժողովուրդին: "Կանթեղալոյս"ը կը ձգտի հաւատքի այս վառ կրակը արծարծ պահել Հայ հոգիներուն մէջ խառնաշփոթ այս ժամանակներուն:

Տիար Ալպէո Նորատունկեան Մայր Եկեղեցւոյ հաւատարոք զաւակ է, հոգեւոր նախանձախնդրութեամբ լեցուն իր արենակիցներուն նկատմամբ Աստուծոյ օգնութեամբ կը կը շանայ ղօղանջ հանդիսանալ Աստուածաշունչի անանցանելի ճշմարտութիւններուն:

Թող ամենախնամ Տէրը առատապէս օրհնէ "Կանթեղալոյսը բաշխելու համար աշխարհացրի հայորդիներուն:

Աղօթարար՝

ՏԵՐ ԱԻԵՏԻՍ ԲԸՆՅ. ԹՈՐՈՍԵԱՆ

Գորտոպա, Արժանթին

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Մարդ արարածին շնորհուած է տեսնել և ըմբռնել շօշափելի և առարկայական գեղեցկութիւններ ինչպէս բնութեան արեւածագը և մայրամուտը: Ըմբռնելու բոյսերու երփներանգ գոյներն ու անոնց անուշահոտութիւնները: Թռչուններու ճոռուղիւնն ու գեղգեղանքը: Մարդկային բարեկամութեան և սիրոյ զրուցադրութիւնն ու անոր զգայուն յարաբերութիւնը: Այս բոլոր հոգեցունց տպաւորութիւններու մէջ, եզակի ազդեցութիւնը եղած է Աստուծոյ անգերազանցելի սիրոյ արտայայտութիւնը մարդ էակին հոգւոյն մէջ՝ Յիսուս Քրիստոսի նկարագրած "Անառակ Որդի" կոչուած առակով:

Աստուածայայտնութիւնը ըմբռնելու համար կարիքը չունինք խորանալու ովկիանոսներու մթութեան մէջ, ոչ ալ բարձրանալու ենք մթնոլորտային բարձունքներ: Աստուածայայտնութիւնը տեսնել շնորհ մըն է որ կը կարօտի խոկումի և գիտակից ներամփոփման: Այգալոյսող խոհեր և մտածումներ կու գան երբ մարդ, իր մտածումները կ'ուղղէ նիւթէն դէպի հոգեկան աշխարհ:

Այս համեստ գրութեամբ կը հրաւիրեմ իւրաքանչիւր ընթերցողը, որ խոհուն իմացականութեամբ, առ Աստուած աղօթեմքով, և ինքնանուիրումով թակէ՛ երկնաւորին դուռը ճանչնալու և ըմբռնելու Հայր երկնաւորին անգերազանցելի Սէրը, որ ստեղծագործ զօրութիւնն է համա՛յն տիեզերք գոյացութեան:

Չունիմ յաւակնութիւնը թէ ես ճանչցած եմ սոյն Սիրոյ ամբողջականութիւնը, սակայն սկսած եմ տեսնել այդ սիրոյ ծամբուն սկիզբը և կ'ուզեմ բաժնել սոյն սիրոյ ծամբան մարդկային ընկերութեան հետ: Յետագայ համեստ մտածումներս և կայծկլտող յայտնութիւնները կը նուիրեմ ազգիս զաւակներուն, և բոլոր՝ Աստուած սիրողներուն:

Ալպէո Նորատունկեան

Մայիս, 1999, Թորոնթօ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ ԱՌԱԿԸ

ԹԷ

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՅՆ ԳԵՐԱԴԱՍ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Առակաները հայելիներու կը նմանին, ուր անձ մը ինքզինք կը տեսնէ: Առականերով խօսիլը ժողովրդական կերպ մըն է, ուսուցացանելու համար շատ ազդու, որ Քրիստոս լայնօրէն օգտագործեց՝ հոգեւոր ծշմարտութիւններ փոխանցելու համար: Աշխարհի բոլոր առակախօսներէ անո՛վ կը տարբերի Յիսուս, որ Իր ո՛չ մէկ առակին նիւթ ըրած է բուսական կամ կենդանական աշխարհը, այլ միայն մարդո՛ւ աշխարհը և անոր հոգեկանութիւնը: Աւետարանի բոլոր առակներուն դերակատարը՝ **մա՛րդն** է: Այս առակը առականերու պսակին թագն է, անգուգականը, որ ինքնին բաւական է ճշգրտօրէն ցուցնելու Աստուծոյ և մարդուն յարաբերութիւնը: Ոչ մէկ առակախօս թողած է ասանկ հրաշալի առակ մը, այսֆան խորապէս գրաւիչ մարդոց սրտին: **"Անառակ Որդիին"** առակը, սիրոյ պատմական յուշարձանն է:

Առակը, առաջնակարգ *միջազգային գրականութիւն* է: Անիկա կը պատկանի բոլոր ժամանակներուն և կը խօսի բոլոր ժողովուրդներուն՝ նոյն լեզուով: Առակը ծշմարտութիւնը ծանչցնելու ամենէն արագ և ուժգին կերպն է: Աւետարանի առակներ՝ Անառակ Որդին, Բարի Սամարացին, Սերմանացանը, Երկու պարտապանները, Մոլորած Ոչխարը, Տասը մնասները: Յիսուս դիտեց և ուշադրութիւն դարձուց աղֆատին ու հարուստին, հրեային ու հեթանոսին, որոնք ֆալեցին Հրեաստանի ծամբաները: Ոչ մէկ առաքեալ իր թուղթերուն մէջ փորձած է ընդօրինակել կամ շարունակել Յիսուսի ուսուցման այս առակախօսական մեթոտը:

«Անառակ Որդիին» առակը առականերու պսակին թագն է, անգուգականը, որ ինքնին բաւական է ճշգրտօրէն ցուցնելու համար Աստուծոյ և մարդուն յարաբերութիւնը: **Ոտնլուան՝** գործադրուած առակ, և կատարուած **խորհուրդ** մըն է: Յիսուսի առակները մարդուն կը յայտնեն մարդուն մէջ գտնուած հարազատը, այսինքն *Աստուածայի՛նը* մարդուն մէջ: Առակը այլաբանական փոքր պատմութիւն մըն է, որ կը պարունակէ նաեւ յաւելեա՛լ խորհրդաբանա-

կան ճշմարտութիւն: Ոչ մէկ առակախօս թողած է ասանկ հրաշալի առակ մը, այսֆան խորապէս գրաւիչ մարդոց սրտերուն, որքան "Անառակ Որդիին" առակը: Ան սիրոյ պատմական յուշարձանն է Աստուծոյ **ՍԻՐՈՅՆ**:

1. Հայրը **«իր ունեցուածքը բաժնեց անոնց»**--12:

Հայրը, իր կրտսեր տղուն շարժառիթին տեղեակ ըլլալով, ինչո՞ւ բաժնեց իր ստացուածքը ու տուաւ զաւակներուն: **"Ազատութիւն"-ը** և **ունեւորութիւնը** թէ՛ առանձնաշնորհ մըն է, և թէ դժբախտութիւն: Արժէքներու շփոթանք մը կայ մարդկային կեանքին մէջ, որ միայն տալով, նուիրելով ու ծառայելով հաւատքը կ'իմաստաւորուի:

Հայրը գիտնալով հանդերձ որ տղան իր ժառանգութիւնը պիտի մսխէ, բաժնեց իր ստացուածքը: Հօրը համար կրտսեր որդին կորսուած մըն էր, հետեւաբար ի՞նչ արժէք ունէր իր նիւթական ստացուածքը: Հայրը, նիւթական ստացուածքը շաղախելով **իր սիրո՞յն** հետ ու տալով զայն իր որդւոյն պիտի կարենար վերաշահիլ ու գտնել զայն որպէս հաւատարիմ ու հարազատ որդի մը: Ծնողական սէ՛րը միայն ունի այն **բացառիկ զօրութիւնը** որ իրեն կը վերադարձնէ կորսուածը: Դժբախտաբար քիչեր կը գործածեն այդ՝ **սէրը**:

Կրտսեր որդին "անառակ" մը չէ՛ր, այլ **անառակութեա՛մբ** ապրեցաւ:

Անասունները անառակ ըլլալու ո՛չ կարելիութիւնը ունին, և ո՛չ ալ կարիքը, որովհետեւ իրենց ինքնութենէն աւելի վեր բարձրանալու առանձնաշնորհը չունին: Ընտանի կենդանիները ընտանի՛ են ու վայրենիներն ալ վայրենի կը շարունակեն: Աշխարհի մէջ մի միայն մարդ էակն է որ ունի ազատ կամք ու առանձնաշնորհը դառնալու հողայնութենէ հոգեղէնի ինչպէս նաեւ հոգեղէնէ հողայնութեան:

Իւրաքանչիւր անհատ դէպի տուն վերադառնալու զանազան ծամբաներ ունի: Սոյն զանազանութիւնները կը տեսնենք Յիսուսի մօտեցումին մէջ երբ Ան կը յարաբերի իւրաքանչիւր մեղաւորին հետ զանազան ձեւերով: Յիսուս Բրիստոս մօտեցաւ Չակէէոսին, անդամալոյծին, Մարիամ մագդաղենացիին, ջրհորէն ջուր փառող Սամարուհիին, ուրացող աշակերտին ու թերահաւատ թովմասին բոլորովին տարբեր միջոցներով ու ծամբաներով: Թէեւ ծամբաները բազմազան կ'երեւին մեզի, սակայն բոլորն ալ կը զգենուն Յիսուսի **սիրոյ** Հոգին, ու կը դառնան:

Մէկ ճամբայ՝ Յիսուս Քրիստոս:

2. Կրտսեր որդին, «**դրամի վերածելով** ամէն ինչ գնաց հեռու աշխարհ»--13:

Մնողական սէրն ու հօրենական ժառանգութիւնը դրամի վերածել, կը նշանակէ *նիւթապաշտութիւն*, որ կրօնական ըմբռնումով կը կոչուի կռապաշտութիւն: Հակառակ մարդկային ազնիւ գաղափարախօսութիւններու, մենք կ'ապրինք այնպիսի երկրի մը մէջ, ուր *նիւթապաշտութիւնը*, *դրամապաշտութիւնը*, աւելին ա՛լ աւելին ունենալու տենչանքը կը հասնին իրենց գագաթնակէտին: Կը ստեղծուին պայմաններ անձը դարձնելու ինքնակեդրոն, եսասէր, այլամերժ, ընդունելու այն վիճակը զորս ուրիշներ կանխաւ վճռած են, առանց ենթակային հաւանութեան: Սէ՞րը, բարեկամութի՞ւնը, գաղափարակա՞նը, կրօ՞նքը, կը համարուին սոսկ ջղային բաբախումներ:

Կրտսեր որդւոյն առակ-պատմութիւնը *նիւթապաշտութեան* կախարդանքէն դէպի հոգեկան տեսիլքի, փրկութեան և ազատութեան վերադարձի պատմութիւնն է ուր Յիսուս փոխաբերականօրէն կը պատկերէ ցոյց տալով Հայրական սէրը որ միա՛կ ճամբան դարձաւ վերագտնելու որդին:

Կրտսեր որդւոյն ամէն ինչ դրամի վերածելով հեռու երկիր մը երթալը, ո՛չ թէ *անհնազանդութիւն* էր, այլ՝ հաւատքի չափահասութեան հասնելու ճիգն ու երկունքը: 12 աշակերտները առանց մեծ նեղութիւններ կրելու դարձան առաքեալ, սակայն Սաւղոս մեծ նեղութիւններ ու նոյնիսկ Քրիստոսի եկեղեցին հալածելէ՛ յետոյ դարձաւ առաքեալ...: Պօղոսին եկեղեցի հալածելը, ո՛չ թէ *անհնազանդութիւն* մը սեպելու ենք, այլ ինչպէս Յիսուս Պետրոսին ըսած էր, կրկնուելու է նաեւ Պօղոսին, իր դարձի գալէն առաջ, այսինքն.

«Քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ մարդոց»--Մատթ. ԺԶ. 23:

Ի՛նչ հոգեկան ճգնաժամի, անասելի գալարումներու և երկունքի ենթարկուած են մեր սուրբերն ու մարտիրոսները մինչեւ որ ծնրադրեն Խաչեցեալի պատուանդանին: Մեզմէ քանի՞նե՞ր ուսումնասիրած են Ս. Օգոստինոսի դարձը դէպի հաւատք, դէպի Քրիստոս, և դէպի խոստովանութիւն: Միթէ բոլոր հաւատացեալներն ալ նոյն դժուարութիւններէ՞ անցան, կամ նոյն սրբութեա՞ն արժանացան:

Այս առակին մէջ "անառակ" բառը կը գործածուի ոչ թէ անհնազանդութեան համար, այլ հեշտութեան, անբարոյականութեան և փառասիրութեան համար, որ կը պատահի մի միայն ազատ կենցաղավարութեան և *ազատ կամֆի* պատճառաւ:

Մարդ էակ, հաւատփի և աստուածճանաչումի փորձառակա՛ն չափահասութեան կը հասնի, իր գործած *անձնական* սխալանքներով և անցնելով կեանքի տառապալից բովէն: Մարդ էակին ի՛ր իսկ ստեղծած տառապանքները պիտի դառնան ա՛յն ծամբան և աստուածայայտութիւնը, ուր ան պիտի ըմբռնէ՛ Գողգոթայի Սուրբ Խաչելութիւնը ոչ որպէս պատահականութիւն մը, այլ աստուածային **Սիրոյ** առարկայակա՛ն արտայայտութիւնը, որ զինք պիտի վերադարձնէ տուն: Այս երկընտրանքին ու ինքզինքին գալուն մէջ, հզօրագոյն զօրութիւնը Աստուծոյ հմայագեղ **սէ՛րն** է, որ մեղաւոր էակը կը ֆաշէ դէպի Իրեն:

3. «Վատնեց իր ունեցուածքը, որովհետեւ անառակ կեանքով կ'ապրէր»--13:

Ի՞նչ է մարդ էակին ունեցուածքը: Մարդ էակին ունեցուածքը իր *գոյութիւնն* է: Մարդ արարած Աստուծո՛վ գոյ է կամ Աստուծոյ մէջ: Անոր էութիւնը, իսկութիւնը և գոյացութիւնը իր հնարաւորութեամբ չէ՛ իրագործուած, այլ շնորհի մըն է Աստուծո՛մէ: Անառակը ի՛ր ստացուածքը չվատնեց, այլ հօ՛րը ժառանգութիւնը: Այն անձը որ չի գիտեր օգտագործել իր ունեցուածքները, զոհ պիտի դառնայ իր ունեցածներուն:

Մարդ արարածին գործօն մասնակցութիւնը չափազանց մտերիմ ու սերտ ըլլալու է անհուն տիեզերքին հետ: Մարդկային գոյացութիւնը մեզ կը ստիպէ ընդունիլ, որ մարդ էակ նպատակի համար ստեղծուած արարած մըն է, ու ոչ պատահականութեան մէկ կոյր ու ժամանակաւոր արտադրութիւնը: Ան ապրելու չէ՛ ինքնիշխան, միայն իր հաճոյքներուն համար: Անառակը նախ քան չափահասութեան գալը, կարծեց թէ կեանքը *վատնում* մըն է: Միայն ինքզինքին գալէ՛ն յետոյ ան ըմբռնեց թէ կեանքը կը դադրի պարզ զուարճութիւն և վատնում մը ըլլալէ, ու պարտ է դառնալ *արդիւնաբեր աստուածահրաշ ստեղծագործութիւն*:

4. «Եւ երբ ամէն ինչ սպառեց»--14:

Քիչեր կան որոնք կը դառնան Աստուծոյ, չվատնած ու չսպառած իրենց բոլոր ունեցածը: Ծնորհակալութիւն Աստուծոյ, որ իր շնորհը անսպառ է: Առարկաներ կան, որոնք մինչեւ որ չիյնան ու

գետին չզարնուին, վեր չեն ցատկեր, սակայն կան նաև առարկաներ ալ, որոնք գետին զարնուելով կը փշրուին և կը կորսուին: Բարեբախտաբար փշրուողներուն և կորսուողներուն կողմին կը գտնուին ու կա՛ն վերապրողներ՝ ապաշխարողներ և սրբացողներ: Այս վերջիններուն կը պատկանի մեր անառակ կրտսեր որդին: Ան եկաւ "ինքզինքին" փոխանակ կորսուելու: Այդ "ինքզինք"-ը, իր հայրական մասնիկն էր: Այդ փոքր մասնիկին մէջ անառակը տեսաւ հայրական սերն ու վստահեցաւ, ապաւինեցաւ հօրը **սիրոյն**:

5. «Այդ երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ»--14:

Սովի ու չֆաւորութեան մատնուիլ բացասական, դժբախտ և փորձիչ դէպքերու ենթարկուիլ է: Ոմանք կը կարծեն, թէ սովն ու չֆաւորութիւնը Աստուած Ինք դրկեց որպէս **պատիժ** այս անառակ կրտսեր եղբօր: Աստուած կը սիրէ՛ նոյնիսկ Ձինք չսիրողները: Աստուած, որպէս Երկնաւոր Հա՛յր կը սիրէ համա՛յն մարդկութիւնը: Աստուած, մարդ էակը կը դաստիարակէ համոզումով ու սիրով ո՛չ բռնատիրութեամբ ու պատժամիջոցներով, որովհետեւ Ան կ՛ուզէ շահի՛լ իր մարդ արարածը: Բոլոր անոնք, որոնք կը սխալին իրենց կեանքին մէջ, ոչ թէ արժանի են ատելութեան և պատիժի, այլ **կարեկցութեան**, որովհետեւ անոնք կամայ ակամայ կը կրեն **հետեւանքը** իրենց գործած սխալին: Խղճի խայթը առաջին պատիժն է ինքնին:

Վրէժխնդիր աստուածներ, հեթանոս հաւատալիքներու մէջ, կ՛ուզէին ցոյց տալ, թէ մեծ մեղքերուն կը յաջորդեն միշտ մեծ պատիժներ: Հին Կտակարանը գործ ունէր *յանցանքի և պատիժի* հետ, **«Ատամն ընդ ատաման»** նշանաբանով: Յիսուս գործ ունի հոգւոյ մեղքին հետ, որ կը մաքրէ սիրով, ու կ՛ըսէ.

«Որդեակ, բու մեղքերդ ներուած են բեզի»:

Երբեմն այնպէս կը կարծենք, թէ Աստուած անկարող է չարը կամ տառապանքը արգիլել: Միայն հաւա՛տն է, որ կրնայ ըմբռնել և թափանցել ամենակալ Աստուծոյ *ամբողջատիրակա՛ն* խորհուրդ գօրութեան: Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Աստուած կ՛արտօսէ չարը, որովհետեւ մարդուն չար արա՛րքն իսկ Ան կրնայ բարիի գործակից դարձնել: Օրինակ՝

1. Յովսէփ գեղեցիկին գերի վաճառումը, Աստուած փոխակերպեց Յակոբ Նահապետը և բոլոր ընտանիքը ապրեցնելու:

2. Մովսէսի գետ նետուիլը պատճառ եղաւ փարաւոնի արքայազուն որդի դառնալուն--Մննդ. 45: 8, 50:20
3. Յիսուս Քրիստոսի դատապարտութիւնն ու մահը, ամենակալ Աստուած փոխակերպեց մարդոց փրկագործութեան-Հոով.Ը. 28:

Հայ հանճարը, ծաղկած և փայլած է յաճախ, կեանքի ծանր հարուածներուն տակ: Վիշտը, տառապանքը, կեանքի դաժան պայմանները, կարծէք, հայ արժէքները երեւան բերելու, հայ տաղանդը ծաղկեցնելու և ուռճացնելու ծառայող, ու մանաւանդ ազգային ջիղը պրկուած պահելու՝ զօրաւոր ազդակներ եղած են: Օրինակ, Ստեփանոս սարկաւազին սպաննութիւնը Աստուած դարձուց քրիստոնէական հաւատքի տարածումին: Մի միայն իրիկնամութիւն (տառապանքի և ցաւի մէջ) քաղններուն կ'երեւի լուսազարդուած և գեղեցկատեսիլ աստղակամար երկինքը: Տառապանքի ու ցաւի ծամբան է, որ կը տանի Աստուծոյ արքայութեան: Այս խորաթափանց տեսութիւնը օտար է թէ պատմական գաղափարականութեան և թէ *ես*-ապաշտ իմաստասիրութեան: Մինչեւ որ Հայ եկեղեցին չտառապի, երկունքի ցաւեր չհաշէ, չի կրնար ինքզինքին գալ, չի կրնար ծնունդ տալ բարեկարգութեան և նոր հաւատացեալներու:

6. «Որպէսզի խոզեր արածէ»--15:

Խոզեր արածելը հրեայ մարդու համար ամենանուաստացուցիչ հանգամանքն էր ստորնութեան: Հրեան կը նախընտրէր մեռնիլ, քան թէ խոզերու հովիւ ըլլալ: Իսկ անօթենալ, մահուան դուռը ողջագործել կը նշանակէ:

Այսպիսի տառապանք մըն է, որ կը ծակատի ու կը նպաստէ ցուցամոլ, պարծենկոտ ու փառասէր անձերու, որոնք սանձարձակօրէն կ'ուզեն հետեւիլ իրենց մարմնական մղումներուն, փոխանակ հետեւելու Յիսուս Քրիստոսի: Որեւէ ընկերութեան մէջ ալ կան անտարակոյս, որոշ արժանիքներ ունեցողներ, բայց իրենց հիւանդագին ցուցամոլութիւններով ամէն ինչ փճացուցած են, թէ՛ իրենց հանգամանքը և թէ՛ իրենք զիրենք:

7. «Կը փափաքէր իր որովայնը լեցնել..., բայց ոչ ոք կու տար իրեն»:

Ֆիզիքական հացի առատութեան մէջ մարդ էակը չզգար սովը **հոգեւոր** հացին: Անօթութիւնը ըլլալով հանդերձ մարմնակա՛ն պահանջ մը ու նզովք, յաճախ մարդ էակը կը մղէ խորհրդածելու և ելք մը փնտռելու իր անել կացութենէն: «Խորհիլ» կը ներկայացնէ

բուն մարդը անոր ներքին էութիւնը, զոր աշխարհի վրայ տրուած է մի միայն մարդ արարածին: Խորհուրդը կամ խորհիլը հանդիպումն է Աստուծոյ և մարդու: Խորհիլ՝ կը նշանակէ, թէ քրիստոնեայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անշօշափելի, բայց զգալի և իմանալի հոգեկան ուժերու և կարողութիւններու հետ: Մտփի լոյսը, արեւի լոյսով անտեսանելի տիեզերք մը կը տեսնէ, որ կը կոչուի տրամաբանութեան և խորհուրդի՝ *“ինքզինքին գալու”* աշխարհը:

***Աստուծոյ խօսքը ... ան կը թափանցէ մինչեւ
նոզիին ու հոգիին, յօդերուն և ծուծին բաժա-
նումի սահմանը, ան կը ֆննէ մտածումները
և սրտին խորհուրդները:***

8. «Այն ատեն ինքզինքին գալով՝ ըսաւ»--17:

Մարդ էակ ի՞նչպէս ինքզինքին կրնայ գալ: Միթէ մարդ ինքզինքէ՞ն դո՛ւրս կ’ելլէ, որ յետոյ կարենայ ինքզինքին վերադառնայ: Մարդ էակին *ինքնագիտակցութիւնը*, իր իսկութեան և էութեան մասնիկն է *self-consciousness*-ը, որ աստուածապարգեւ շնորհ մըն է մարդուն: Անհատին կողմէ սեփական անձնաւորութեան գիտակցութիւնն է, ինքն՝ իր առանձնացումը արտաքին աշխարհէն: Դրակա՛ն ինքնագիտակցութիւնը ծառայութիւն, անձնագոհութիւն և հանդուրժողութիւն է: Ժխտական ինքնագիտակցութիւն չկայ, անոր փոխարէն կայ՝ մարմնական հեշտանք, մարմնական յագեցում, որ կը մթագնէ ու կը թմրեցնէ մարդ էակին գիտակցութիւնը:

Ինքնագիտակցութիւնը կը յայտնէ հոգւոյն հասունութիւնը, երբ մարդ կը յաջողի ֆննել ոչ միայն արտաքին աշխարհը, այլ նաեւ իր ներքին՝ աշխարհը: Գիտակցութիւնդ, կը յայտնէ թէ դուն սահմանաւոր էակ մըն ես, արարած մը և ո՛չ ինքնաստեղծ էակ: Բնութեան թափուն ուժերը կը ծնշեն քեզ ամէն կողմէն, կը խորտակեն յոյսերդ, կը սպառնան, մահուան ուրուականով յիշեցնելով քեզի՝ թէ դուն հիւլէ՛ ես, հիւլէներու մէջ ու կը կարօտիս Աստուծոյ: Մտածումիդ առընթեր՝ կ’արթննայ անզուսպ կամք մը՝ որ սրտիդ մէջ կը զետեղէ անհատնում հաւատք առ Արարիչ Աստուած:

«Մարդկային միտքը աւելի զԱստուած կրնայ ծանչնալ քան ինքզինքը»: Մեր ինքնութիւնը աստուածութեան ցուցադրած տիեզերական տոամին մէջ մեր ստանձնած դերով կը սահմանուի: Աստուած Նախապատճառն է կամ Արարիչը, անհրաժեշտ և կենսական

Ինֆնուծիւնը, որուն մէջ միաձուլուած է նաեւ մեր իսկութիւնն ու գոյացութիւնը: Մեր **ինֆնուծիւնը** աստուածային ցուցադրուած տիեզերական տոամին մէջ, մե՛ր ստանձնած դերով կը սահմանուի: Գոհունակութիւնն է, որ առիթ կու տայ անհատի մը իր ինֆնուծիւնը ընդունելու: Իւրաքանչիւր անհատ, եզակի անձնաւորութիւն մըն է: «Անառակ Որդիի» առակին մէջ մենք կը տեսնենք ծնողֆի՛ն **Աստուծո՛յ Ինֆնուծիւնը**: Ծնողֆ մը կը պատկերէ սէր, ներում, և ողորմութիւն:

Վերոյիշեալ պատճառներով, Պօղոս երբ հանդիպում ունեցաւ լուսեղէ՛ն Քրիստոսի, զղջած, ապաշխարեց, մկրտուեցաւ ու յետոյ գնաց Արաբիոյ անապատը ու երկու տարի ճգնեցաւ, խորհրդաբանեց, *եկաւ ինֆզինֆին* ու շրջադարձ մը ընելով աշակերտեցաւ իր նոր Տիրոջ՝ Յարուցեալ Յիսուս Քրիստոսի:

Ուստի մարդ էակի մը *“ինֆզինֆին գալը”* կը նշանակէ *զղջում*՝ և *ապաշխարութիւն*, հոգեկան և մտային՝ *ամբողջական* էութեան շրջադարձ մը դէպի բարին, ուղիղը և սրբութիւն: Ոչ թէ *կերպարանա*-փոխութիւն, այլ *ներհնագոյն էութեան* փոխարկումը՝ վերստին ծնունդ՝ հոգեղէնի ծանաչմա՛ն ծնունդ: Մարդ էակ ինչքան ալ միւրճուի անցեալի տխուր, ամօթալի և անհետացող դէպքերու յիշատակութեան մէջ, անոր խորհրդածող գանձարանի յիշատակներուն մէջ **կը գտնուին**, թէպէտ աղօտ, սակայն նշոյլները իր հօրենական տան գուրգուրանֆին, նուիրումին ու սիրոյն:

Ինֆնագիտակից մտածողութիւնը զօրակոչի կ’ենթարկէ, մանաւանդ թշուառութեան ենթարկուածի մը անյատակ տարիներու յիշատակները: Խոզերու երամին մէջ մարդացած կրտսեր եղբայրը իր յիշողութեան պաստառին վրայ սկսաւ տեսնել հօրենական տան շէնութիւնը, ուրախութիւնը ու նաեւ արցունքահոս աչքերը իր հօր: Անոր յիշողութեան մէջ լսուեցաւ հօր վերջին մելանոյշ ձայնը, որ ըսած էր իրեն. «Սիրուն որդիս, ես քեզ միշտ պիտի սիրեմ ո՛ւր որ ըլլաս»: Սոյն հայրական սիրոյ խորաթափանց ձայնը ցնցեց զինք: Անոր ամբողջական էութիւնը յուզումի և զղջումի գիտակցութեան մէջ ունեցան մէ՛կ փրկութեան ծամբայ՝ վերադառնա՛լ հօրենական տուն՝ **փրկութիւն**:

9. «Ելլեմ երթամ հօրս քով»--18:

Հայր բառը չունի իր նմանողականը, իր հոմանիշը, վերջապէս իր հաւասարագօրը: Վախը փարատելու ու ցրուելու համար, Յիսուս՝ Որդի Աստուծոյն, զԱստուած ներկայացուց վեհափառօրէն որպէս **Հա՛յր Երկնաւորը**: Մարդ մինչեւ որ իր նախապաշարեալ սեւե-

ուակէտը չփոխէ, զԱստուած բռնատէր պիտի կարծէ, մինչդեռ Աստուած վեհափառօրէն Հայրութիւն է՝ Ակնադրբիրը փրկութեան:

10. «Եւ ըսեմ անոր»--18:

Երբ կ'ուսումնասիրենք "Անառակ Որդիին" առակը, հոն կը հանդիպինք որ կրտսեր որդին միայն երկու անգամ խօսած է իր հօր հետ: Առաջին անգամ ան կը *պահանջէ իր ժառանգութիւնը* ու երկրորդ անգամ կը *յայտնէ իր զղջումը*:

Առաջինին մէջ, տղան ամբարտաւան է ու բարձրավիզ, կարծես թէ հայրը պարտական է, չմեռած, բաժնել իր ունեցածը: Ամբարտաւանը յաւակնոտ է, ինքնագով, գոռոզ, կը կարծէ՝ թէ ինք ամենագէտ է, իսելացի, մաֆուր, անմեղ, և բոլորը տգէտ:

«Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, բայց խոնարհներուն շնորհ կու տայ»--Ա.Պետ. Ե. 5:

Երկրորդ խօսակցութեան ընթացքին, անառակը բոլորովին փոխուած, փոխաշրջուած անձնաւորութիւն մըն է: Խոզերուն մէջ ան կ'երեւի զղջողական հոգիով և ինքնասրբագրական կամփով: Աղօթքը կ'արժանաւորուի երբ աղօթողը ի՛ր հոգիին ներկայութեամբ և բառերուն իմաստը ըմբռնելով կ'աղօթէ ապաշխարանքի և զղջումի հոգիով: Մեղաւոր մը երբ կու գայ ինքզինքին, անոր մեղանչումին մէջէն կը բխի **զղջումի մարգարիտը**, որ զինք կը դնէ փրկութեան ծանապարհին: Աստուծոյ **սէրը** հանդէպ մեղաւորին ոսկի բանալին է արքայութեան, իսկ ենթակային **զղջումը՝** գինն է փրկութեան:

Փրկութիւնը *մեքենական գործողութիւն* մը չէ՛: «Ես փրկուած եմ: Ես ապաշխարած եմ» ըսելը, փրկուած ըլլալ չէ՛, այլ՝ ինքնախաբէութիւն է: Առանց *դարձի* փրկութիւն չկայ, փրկութիւնը միշտ կապուած է *զղջման և դարձի* հետ--Գործք .ԻԶ. 20: Ապաշխարութեամբ և **կեանքի փոխակերպութեամբ** մարդ կարելիութիւնը ունի ազատուելու Աստուծոյ դատաստանէն: Պօղոս առաքեալ կ'ըսէ.

«Քարոզեցի որ **զղջան** ու դառնան կենդանի Աստուծոյն

և ապաշխարութեան արժանի **գործեր կատարեն**»:

Ի՞նչ է ապաշխարութիւնը:

Ապաշխարութիւնը՝ մեղքին ու մեղանչականութեան կոնակ դարձնելով հակառակ ուղղութիւն մը առնել է:

1. Ապաշխարողը իր **ամբողջ կեանքն** ու **ապրումը** կը վերածէ *տեւական* ձգտումի դէպի Արարիչը լոյսին, դէպի Ակնադրբիրը

Կեանքին, դէպի Ամենաբարին՝ Աստուած:

2. Դէպի Աստուած իր ուղիէն *չի շեղիր*, հաստատ հաւատքի, անխախտ յոյսի և սիրոյ առաքինութիւնները *չի մոռնար*:

Կարդանք միասին ապաշխարող և զղջացող "Անառակ Որդիին" զղջումի՝ խոստովանութիւնը, որ կ'ուզէ ընել իր հօր.

**«Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու բու առջեւդ
և այլեւս արժանի չեմ՝ բու որդիդ կոչուելու,
զիս բու վարձկաններէդ մէկը դարձուր»--19:**

Մեծ Պահի՛՝ փառասուն-ութ օր խոկումի, աղօթքի, ինքնաքննութեան ու զղջումի միջոցով, ապաշխարութիւն է: Ծումն ու պահքը պիտանի հոգեւոր վարժութիւններ են: Պահի է նաեւ խոնարհութիւնը, չբարկանալը, չաղաղակելը, չնախանձիլը և վրէժխնդիր չ'ըլլալը:

Դժուարացած է եկեղեցի յաճախել, աղօթքներ մտաբերել: Բայց կ'արժէ ծիգ մը կատարել և գոնէ տարին անգամ մը վերադառնալ հաւատքի ակունքներուն և ըմպել անոր ջինջ ու առողջարար բխումներէն:

Ի՞նչ է Չղջումը:

Յիսուս Բրիստոս, աշխարհի ներում շնորհելու եկաւ, փոխանակ դատապարտելու: Պոռնկութեան մէջ բռնուած կնոջը, Ան ըսաւ. *«Ես ալ քեզ չեմ դատապարտեր, գնա և այսուհետեւ մի՛ մեղանչեր»*: Բրիստոսի աստուածայայտնութեան մէջ **պատիժ** չկայ: Մարդ էակ՝ ի՛ր գործած մեղքին որպէս **հետեւա՛նք** կը կորսնցնէ յաւիտենական ապրելու իրաւունքը:

1. Ներել և արդարացնել, ֆրիստոնէական հաւատքին կեդրոնական դերն ու շնորհն է, զղջումի և ապաշխարութեան եկող մեղաւորի մը համար:
2. Ներում և փառութիւն թէեւ ձրի շնորհաբաշխ պարգեւներ ըլլալ կը կարծուին, սակայն մարդկային կարողութեան սահմանումին պատճառաւ **զղջո՛ւմ և խոստովանա՛նք** կը պահանջուի:
3. Մեղքերու թողութիւնը այն միաւորող, և հաշտեցնող կամուրջն է, ուր մարդ և Աստուած կը միանան և կ'ողջագուրուին:
4. Սոյն կամուրջին վրայ Աստուած ցոյց կու տայ իր սիրո՛յ, սպասումի և ներումի Հոգին, իսկ մարդն ալ իր զղջումը խոստովանութիւնը ու ի հարկին՝ հատուցումը:
5. Չղջում և խոստովանութիւն (ապաշխարութիւն) իրենց մէջ կը պարունակեն նաեւ **արարք** մը, որ յաճախ կ'անտեսուի՝ *"անա-*

ռակը ելաւ և գնաց", իսկ Ջակֆէոս իր գործած վնասը **"հատուցանեց"**:

1. "Խօսքով" ներողութիւն ըսելը *զղջում*՝ մը չէ՛, զղջումը **գործ-
ֆո՛ւլ շօշափելի՛օրէն** արտայայտուելու է:
2. "Հատուցումը" զղջումին առարկայակա՛ն արտայայտութիւնն է, այսինքն *իրագործուա՛ծ* Խոստովանութիւնը:
3. Չղջումը հոգեկան անհրաժեշտ և ազդեցիկ իրողութիւն մըն է, ոչ միայն անհատներու համար, այլ նաեւ *ազգերու միջեւ ըլլալիք հաշտութեան*:

Հրէութեան և Իսլամ կրօններու մէջ եւս կայ "Աստուածային ողորմութեան շնորհն ու պարգեւ"ը, սակայն առանց շօշափելի և տեսանելի արտայայտութեան:

1. Աստուծոյ շօշափելի և տեսանելի ներումի և սիրոյ հոգին, մարդկութիւնը կը տեսնէ մի միայն Գողգոթայի բարձունքը Աստուծոյ Որդւոյն *առարկայակա՛ն* անձնագոհութեան դերին մէջ:
2. Բոլոր այն կրօններուն մէջ, ուր յանցանքի համար **պատիժ** կը պահանջուի, ներում և մեղքերու արձակում չի կրնար գոյութիւն ունենալ:
3. Խաչին վրայ Յիսուսի խօսքերէն առաջին երեքը ներումի և սիրոյ խօսքեր էին. *«Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ՛ընեն»*: Յաջորդ երկուքը՝ տագնապի և տառապանքի, վերջին երկուքը՝ գոհութեան և յաղթանակի:

11. «Եւ ելաւ եկաւ իր հօրը»--20:

Կրտսեր որդին (անառակը) 1. եկաւ ինքզինքին, անդրադարձաւ իր ունայն և սխալ ընթացքին, 2. զղջաց, ապաշխարեց, և 3. պատրաստեց ու ծրագրեց իր խոստովանութիւնը ամենայն խոնարհութեամբ և կամովին: Վերոյիշեալ բոլորը, մտացածին ու հոգեկան խորհրդածութիւններ էին, ո՛չ *իրագործութիւններ*: Միթէ մե՛նք եւս նոյնպիսի խորհրդածութիւններ չե՞նք ունեցած: Անշուշտ ունեցած ենք: Անառակին մեծագոյն իրագործութիւնը՝ **«Ելլել ու իր հօրը երթա՛լն էր»**: Այս երթը ապաշխարութեան ու զղջումի կատա՛րն է, այսինքն **ապաշխարութեան գործադրումը**:

12. «Մինչ տակաւին հեռու էր՝ հայրը տեսաւ զայն ու գթաց, ելաւ և վազեց անոր ընդառաջ, վիզին փաթթուեցաւ և համբուրեց զայն:

«Անառակ Որդիի» առակին մէջ մենք կը տեսնենք ծնողի մը

Ճշմարիտ և աստուածահաճո՛յ ինֆնութիւնը: Աւետարանին մէջ "Անառակ Որդի" մակդիրը տրուած է Յիսուսի այս առակին, ո՛չ թէ առաքեալի մը կամ աւետարանագրի մը կողմէ, այլ Աստուածաշունչի ընկերութեան կողմէ: Եթէ ներուի ու թոյլատրուի ինձ՝ համեստիս, ես պիտի փափաքիմ անուանել սոյն առակը.

«Հօր Աստուծոյ Անգերազանցելի Սէրը»:

Որովհետեւ Հա՛յր Աստուած կը պատկերէ անսպառ **սէր, ներում և ողորմութիւն:** Եթէ "Անառակ"ը հօրը կը պատկանէր, հայրն ալ իրեն կը պատկանէր, իր ծնողքն էր, իր միսէն կազմուած: Բարձրաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը երբեք չեն կրնար կասեցնել հայրական սիրոյն ուժգնութիւնը: **ՍԻՐՈՅ** իղձը սահման չունի, ո՛չ ժամանակը և ո՛չ միջոցը կրնան միջամտել սիրո՛յ **առարկայակա՛ն** արտայայտութեան:

«Անառակին» վերադարձը տուն, *հայրական սիրոյ յաղթութիւնն է*, որ Յիսուս կը ջանայ նկարել մեր մտապատկերին մէջ: Հայրը թէ՛ տեսաւ և թէ՛ ծանչցաւ իր որդին, որովհետեւ կը հաւատա՛ր ու կը յուսար որ իր որդին պիտի վերադառնայ տուն: Հայրական աննման ու միսթիկ սէրը ունի այն բացառիկ զօրութիւնը որ անգերազանցելի է և անբացատրելի, սակայն գործօն և իմանալի համայն տիեզերք համալիրին մէջ:

13. «Հայրը տեսաւ զայն և գթաց»--20:

Հայրը *օրէնսդրական կանոններով* չվերաբերուեցաւ իր որդւոյն հետ, իր հայրական *արժանապատուութեամբ* չվարուեցաւ, այլ սիրո՛յ, ողորմութեա՛ն և թողութեա՛ն բանաձեւով՝ **ԳԹՈՒԹԵԱՄԲ:** Հա՛յրն էր որ յառաջ վազեց դիմատրելու որդին, հա՛յրն էր որ վզին փաթթուեցաւ գարշահոտ որդւոյն և հա՛յրն էր որ համբուրեց որդին:

Յիսուս փաղցր Օրէնսդիր էր, ո՛չ խստութեամբ դատապարտող: Պաշտամունքի ծէ՛սն ու հաւատացեալի մը կենցաղավարութիւնը, արտաքին օրէնքի, աւանդութեան և մեքենայութեան կերպարանք ստանալու չէ՛: Յիսուս ըսաւ.

«Ճշմարիտ երկրպագուները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը, որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ որ իր երկրպագուները այդպիսին ըլլան...: Հոգի է Աստուած, և Անոր երկրպագուները պէտք է հոգիով և ճըջ-

մարտութեամբ զԱյն պաշտեն»:

Քրիստոս Իր կենդանի օրինակով մարմնացուց հեզութիւնը, խոնարհութիւնը և ծառայութիւնը: Աստուծոյ պահանջները կը յառաջանան, օրինականէն դէպի բարոյականը, և բարոյականէն դէպի հոգեւորը: Փարիսեցին գնաց տաճար աղօթելու, բայց աղօթելու փոխարէն սկսաւ պարծենալ իր օրինապահութեամբ...:

Ս. Ներսէս Շնորհալին, աշակերտելով Քրիստոսի և Ս. Աւետարանին, կը գրէ, ըսելով. «Տէր, արդարութեամբդ մի դատեր, այլ Քու գթութեամբդ փառէ զիս»: Աննուաճելի մեծութիւնը, ո՛չ հանճարեղ գիտունն է, ո՛չ ներհուն մտաւորականը, ո՛չ շնորհազարդ արուեստագէտը, ո՛չ դափնեկիր ֆերթողը, և ո՛չ ալ ոսկեկշիռ միլիոնատէրը: Կեանքի մէջ իսկական մեծութիւնը՝ այն մահկանցու մարդն է, որուն սիրտը կը գործէ գթութեան և զոհողութեան բաբախումներով:

Նիցչէ ներկայացուց ֆրիստոնէական առաքինութիւնները՝ գթութիւն, խոնարհութիւն, ազնուութիւն և անձնագոհութիւն որպէս ոչխարամիտ բարոյականութիւն, որոնք պէտք են ջնջուիլ: Նիցչէ շարունակ առեց հայհոյեց, խարանեց ֆրիստոնէութիւնը, և սակայն, վաշելեց գթառատ հոգածութիւնը ֆրիստոնէայ անձնուրաց էակներու: Ան մեռաւ, արդարեւ, Գթութեան Քոյրերու Հաստատութեան մը մէջ:

Ի՞նչ է **ԳՈՒԹՈՂ**

Գութ ու ողորմութիւն առ թշնամիս գերմարդկային է և աստուածանմանութեան կը տանի: Սէրը սիրուողը թափանցիկ կ'ընէ: Սիրելով թշնամին, կը մաքրենք մեր գիտակցութիւնը ու մեր ոգին: Մարդը ի՛րապէս մարդ է երբ իր մէջ կը ծնի գութը: Աւետարանին մէջ ողորմութեան վերջնական ձեւը կը յայտնուի որպէս **գթութիւն և կարեկցութիւն:**

14. «Եւ համբուրեց զայն»--20:

Մարդիկ յանցապարտի մը կրնան ներել: Հակառակորդի մը հետ կրնան հաշտուիլ, սակայն զանոնք համբուրե՛լ և սիրել, սիրոյ յաւելեալ զօրութեան մը կարիքը ունի: Հայրը համբուրելով իր զաւակը շաղաղեց սէր և շողացուց բարի լոյսը աստուածածայգ: Ան համբուրեց զինք լիող և իր հայրութիւնը ուրացող որդին շատ ու շատ անգամներ, կարծես բերանով ստուգել կ'ուզէր թէ երազի մը ցնորքը չէ որ կ'ապրի, այլ իր կրտսեր որդւոյն շօշափելի՛ վերադարձն է որ կը ողջագուրէ:

Հայրը եթէ յանդիմանած ըլլար տղուն պահանջը, ու եթէ չբաժներ իր ժառանգութիւնը երկուֆին (որով յայտնած եղաւ իր հայրական սէրը), կրտսեր որդին նորէ՛ն պիտի մեկնէր օտար քաղաք, ու ա՛յս անգամ գողութեամբ կամ ոճիրով պիտի ապրէր ու երբեք չպիտի վերադառնար հօրէնական տունը: Սէրը կարթն է հոգիներ որսալու կամ շահելու: Հայրը իր հեռատէս խորագիտութեամբ ընտրեց զոհողութեան, նուիրումի և անձնուրացութեան ծամբան ու վերագտաւ իր կորսուած որդին:

15. Որդին ըսաւ հօրը. «Հա՛յր, մեղանչեցի երկնֆի դէմ և քու առջեւդ, ալլեւս աժանի չեմ քու որդիդ կոչուելու»--21:

Այն երիտասարդը որ մօտեցած էր ծերունի հօր, որպէս պահանջատէր, հիմա կը ծնրադրէ՛ նոյն հօր ոտքերուն և արցունքահոս ու լալահառաչ կը յայտնէ անոր իր զղջումն ու խոստովանութիւնը: Մարդկային մօտեցումը առ Աստուած պարտ է ըլլալ խո՛ր ու ծնրադիր, յարգանօք ու խոնարհութեամբ:

Այս երիտասարդը վերադարձաւ տուն, ո՛չ որովհետեւ անօթի մնացած էր, ո՛չ որովհետեւ ունեցածը կորսնցուցած էր, ու ոչ ալ անտուն և անպատասպար էր: Խոզարածը վերադարձաւ տուն, որովհետեւ իր տունէն բաժանումի ժամուն ան տեսաւ հօրը անսպառ սէրն ու ողբակոծ հառաչանքը: Հօրը հաւատքը՝ անխորտակելի, անոր յոյսը՝ լուսաւոր և սէրը՝ անփոխարինելի ըլլալուն համար, ան կրցաւ վերաշահիլ որդին, որ ալլեւս դարձած էր չափահաս, ինքնագիտակից ու հաւատարիմ և հայրասէր:

Ծնրադիր հեծկլտացող խոզարածը հազիւ սկսաւ խոստովանիլ, ըսելով. «Հա՛յր, մեղանչեցի երկնֆի դէմ և քու առջեւդ, ալլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու», հայրը ընդմիջեց զինք ու ծանաներուն հրամայեց ըսելով.

«Հանեցէ՛ք տղուս նախկին պատմութեանը, հագուեցուցէ՛ք զայն, մատանին իր մատը դրէ՛ք և իր ոտքերուն՝ կօշիկներ. բերէ՛ք պարարտ եզը, մորթեցէ՛ք, ուտեն՛ք և ուրախանան՛ք, որովհետեւ իմ այս որդիս մեռած էր և ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ. և սկսան ուրախանալ»--22-24:

Հայրը ընդմիջեց իր որդւոյն խոստովանանքը, որովհետեւ չուզեց իմանալ անոր խոստովանանքին վերջին բառերը որոնք պիտի ըլլային.

«Զիս քու վարձկաններէդ մէկը դարձուր»--20:

Հօրը թողութեան և ներումի նկարագրութիւնը կը գերադասէ մարդկային ազնուագոյն հիւրասիրութեան մտածումը ու ցոյց կու տայ Գերմարդկայինը՝ աստուածայի՛ն ընդունելութեան խորութիւնն ու վսեմութիւնը: Մարդկային տեսանելիութեան համար, Յիսուս կը բանայ երկնփի վարագոյրը որպէսզի մարդիկ առարկայականօրէն կարենան տեսնել Վեհափառ Հայրութեան սիրոյ խորքը: Որովհետեւ սիրոյ մէջ բառերը կարելոր չեն, խօսքերը կանֆ կ'առնեն ու միայն **լռութիւնը** կը խօսի:

Մեծագոյն զոհողութիւնները յաճախ կը կատարուին լուռ և անխօս: Գերագոյն աղօթքը լռութեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, որովհետեւ երբ մարմինը լուռ է, հոգին կ'աղօթէ: Միայն խաւարին մէջ կ'երեւի լոյսը, և լռութեան մէջ կ'իմացուի Աստուծոյ մելանուշ Ձայնը: Մարդ էակ պարտ է գտնել զԱստուած, բայց Ան՝ անգտանելի է աղմուկի և ժխորի մէջ: Աստուած բարեկամ է լռութեան: Տեսէ՛ք բնութիւնը--ծառ, խոտ և ծաղիկ--անոնք կ'աճին լռութեան մէջ: Դիտեցէ՛ք աստղերը, լուսինը, արեւը. անոնք կը շարժին լռութեամբ: Որովհետեւ լռութիւնը՝ ներկայութիւնն է Աստուծոյ:

Սոյն արտայայտիչ լռութեան մէջ, փրկուած ու մեղքերէ ձերբազատուած ու վերագտնուած կորուսեալը կը լսէ իր հարազատ վաւերացումը ո՛չ թէ որպէս **ծառայ**, այլ՝ որպէս հօրէնական տան **որդի՛ն**: Վաւերացումին ապացոյցներն են՝

1. Նախկին հանդերձանփի պատմութեանը:
2. Որդեգրութեան մատանին:
3. Կօշիկներ իր ոտքերուն:
4. Մորթել և զոհագործել պարարտ եզր՝ հաշտութեան և ուրախութեան նշան:

Վերոյիշեալ անսպասելի և անակնկալ ուրախութիւնը Յիսուս կը կոչէ *հրեշտակներու խանդավառութիւնը*. «Աստուծոյ հրեշտակներուն առջեւ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէ՛կ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ»--10:

16. «Այս որդիս մեռած էր և ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ»:

Մեղաւորի մը զղջումն ու ապաշխարութիւնը՝ վերադարձ դէպի Աստուած, Աւետարանը կը կոչէ մեռելներէ ողջնալ ու կորսուածը վերագտնել, ա՛յլ խօսքով, **մեռելոց յարութիւն**:

Երբ մեզի հարցուի թէ Աստուած ի՞նչ կ'ընէ աշխարհը ստեղծելէն յետոյ, անոր պատասխանը պէտք է ըլլայ հետեւեալը. «Աստուած, աշխարհը իր **լրումին** կը հասցնէ, այլ խօսքով, անոր

կատարելութեան»:

17. «Իսկ անոր երէց որդին ագարակն էր»--25:

Երէց որդին աշխատասէր և արդիւնաբեր էր: Հօրմէն ստացած ժառանգութիւնը փոխանակ վատնելու, կը բազմապատկէր...: Մայրամուտին երբ տուն կը վերադառնար, լսեց երգերու և պարերու ձայն մը որուն չկրցաւ հաշտուիլ, ու կանչելով ծառաներէն մէկը հարցուց անոր թէ ի՞նչ է այս աննախընթաց դէպք ուրախութիւնը:

Ծառան, որպէս չէզոք անձնաւորութիւն, ըսաւ երէց տղուն. *«Եղբայրդ եկած է, և հայրդ մորթեց պարարտ եզը, որովհետեւ ողջ առողջ գտաւ զայն»:* Սոյն լուրը կարծես շանթի հարուած մը ըլլար, զայրացուց երէց եղբայրը ու ան չուզեց նոյնիսկ ներս մտնել:

Հայրական սէրը խտրականութիւն չի ծանչնար: Հայր մը հաւասար կերպով կը սիրէ իր բոլոր զաւակները, որովհետեւ բոլորն ալ ի՛րն են, իր միսէն միս և իր արիւնէն արիւն: Ինչպէս որ իր անառակ որդին դիմաւորելու գնաց, նոյնպէս հա՛յրը դուրս կ'ելլէ դիմաւորելու իր երէց որդին և հրաւիրելու զայն պարի և ուրախութեան:

18. «Հայրը կ'աղաչէր անոր» որ ներս մտնէ--28:

Աղաչանքը ցոյց կու տայ հայրական սէրը հանդէպ իր զաւակներուն: Աղաչանքը ապացոյց է նաեւ *գթութեան և կարեկցութեան*: Հայր մը կը կարեկցի իր զակին անզգայութեան: Երէց տղան ոչ թէ անզգայ է և անգութ, այլ **թմրեցուցա՛ծ** է աստուածային սոյն զգացումները իր ազահութեան, դրամապաշտութեան և անտարբերութեան պատճառաւ:

Կրտսեր տղան հեշտամուլ էր, եսասէր ու հաճոյամուլ, բայց ոչ երբեք անզգայ: Սակայն երէց տղան, նման Փարիսեցիներու, իր սիրտը ֆարերէ աւելի կարծր է անզգայ, անշունչ և անկենդան:

Հայրական գթութեան և կարեկցութեան որպէս հակադրութիւն, երէց տղան կը պատասխանէ հօրը, ըսելով.

«Քանի՛ տարի է որ կը ծառայեմ քեզի, և երբեք քու հրամաններդ զանց չեմ ըրած. ու մը անգամ չտուիր ինձի, որ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի»--28:

Նախանձը կուրցուցած էր երէց տղան, որովհետեւ հայրը սկիզբէն անոր ալ բաժնած էր իր ժառանգութիւնը: Երէց եղբայրը իր պզտիկ եղբօր բաժնին երկո՛ւ անգամը ստացած էր, որովհետեւ ան կը նկատուէր անդրանի՛կ որդին--(Բ. Օրին. ԻԱ. 15-17):

Բարօրութեան մէջ մարդիկ կ'անտեսեն Աստուծոյ պարգեւները և կը դառնան ազահ՝ կոպաշտ: Ազահութեան վերջնական պտուղը՝ վիշտն է: Աստուածճանաչումը հաւատքի ուժն է նախապաշարումի և նիւթապաշտ ազահութեան դէմ:

19. «Կը ծառայեմ քեզի, և երբեք բու հրամաններդ զանց չեմ ըրած»:

Երէց եղբօր վերոյիշեալ խօսքերը կը յիշեցնեն Հին Ուխտի հաւատացեալները: Պօղոս առաքեալ իր աննման սիրոյ ներշնչանքով կը գեղգեղէ հաւատքին կատարը, ըսելով.

«Եթէ խօսիմ մարդոց և հրեշտակներուն լեզուները, բայց սէր չունենամ, կը նմանիմ պղինձի մը՝ որ կը հնչէ...Եւ եթէ մարգարէութիւն ընելու շնորհ ունենամ և հասկնամ բոլոր խորհուրդերն ու ամբողջ գիտութիւնը, և ունենամ ամբողջ հաւատքը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու, բայց սէր չունենամ՝ ոչինչ եմ»--Ա. Կորնթ. ԺԳ. 1-2:

Քրիստոնէութեան «Ի՞նչ»ը չէ որ ֆրիստոնեան պիտի ազատագրէ մահէ, այլ՝ անոր «ինչպէ՞ս»ը: Այս «ինչպէ՞ս»ը՝ հաւատալով ու վստահելով հետեւի՛լ է Յիսուսի առանց խտրութեան ցեղի, սեռի և լեզուի: Հաւատալը՝ հաւատքն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Քրիստոնէութիւնը՝ ոմանց համար կրօնասիրական ծառ է կամ դաւանական օրինապահութիւն, ...գործնակա՛ն ֆրիստոնէութիւնը **սիրո՛յ** ապրումն է: Պօղոս առաքեալ կ'ըսէ.

«Ինծի համար կեանքը Քրիստոս է, իսկ մեռնիլը՝ շահ»:

Քրիստոնէութիւնը կառուցուած է Յիսուս Քրիստոսի *զոհաբերութեա՛ն* խորհուրդին վրայ, ոչ միայն որպէս *տեսութիւն* մը, այլ *առարկայական դէպք իրողութիւն*: Գողգոթայի սարի ֆարե՛րն անգամ կ'աղաղակեն: Հրեաները նշան կ'ուզեն, Յոյները իմաստութիւն, իսկ առաքեալները կը ֆարոզեն «Խաչեալ Քրիստոսը»՝ **անձնազոհութիւն**: Քրիստոնեան այն մարդն է՝ որ կը ջնջէ իր անձը՝ այսինքն, Եսասիրութիւնը, փառատենչութիւնը, և կ'աշխատի իր ընկերոջ բարիքին ու Աստուծոյ փառքին համար:

Աշակերտութեան պայմանն է՝ «Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ՝ թող ուրանայ իր անձը, թող իր խաչը առնէ և իմ ետեւէս գայ. որովհետեւ ով որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. իսկ

ով որ կորսնցնէ իր անձը Աւետարանին համար՝ պիտի փրկէ զայն»--Մարկոս Ը. 35:

20. «Իսկ երբ եկաւ քու այդ որդիդ»--30

Հակառակ մարդկային ազնիւ գաղափարախօսութիւններու, մենք կ'ապրինք այնպիսի երկրի մը մէջ, ուր նիւթապաշտութիւնը, դրամապաշտութիւնը, աւելին և ա՛լ աւելին ունենալու տենչանքը կը հասնին իրենց գագաթնակէտին: Կը ստեղծուին պայմաններ անձը դարձնելու ինքնակեդրոն եսասէր և այլամերժ: Երէց եսասէր եղբայրը դարձած է անզգայ, այլամերժ և փոխանակ հօրը ըսելու. «երբ եկաւ **եղբայրս**», ան կ'ըսէ. «երբ եկաւ **քո՛ւ որդիդ**»:

Ան ուրացած է ո՛չ միայն իր եղբայրը, այլ նաեւ իր հարազատ հայրը: Ընչափաղցութիւնը աւեր մըն է որ ո՛չ թէ կը քանդէ քաղաքները, այլ մարդկային իսկութիւնը և աստուածակերտ մարդը կը դարձնէ ոչնչութեան: Չորրորդ Խաչակրութիւնը (1201-1204), Վենետիկցիներուն կոյր ընչափաղցութեան պատճառով խորտակեց յոյն կայսրութեան դիմադրական ուժը և դար մը վերջ թուրքերը գրաւեցին Բիզանդիոնը: Հարստութեան մէջ գոյութիւն չունին ընտանիքի, ազգի, և Աստուծոյ սէրը: Աշխարհիս մեծութեան և հարստութեան սահմանը գերեզմանն է:

«Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փծացնեն և կամ գողերը պատդ քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցէք երկինքի մէջ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»--Մատ. Զ. 19:

21. «Որ ունեցուածքդ կերաւ պոռնիկներու հետ»--30:

«Ինչո՞ւ կը դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարես»
--ԺԴ. 10: «Ո՞վ ես դուն, որ Աստուծոյ ծառան կը դատես»--
Հոով. ԺԴ. 4:

«Ուստի դուրս ալ ոեւէ մէկը մի՛ դատէք ժամանակէն առաջ, մինչեւ զայ Տէրը, որ մարդոց մովթ գաղտնիքները լոյսին պիտի բերէ եւ երեւան պիտի հանէ միտքերուն մէջ ծածկուած խորհուրդները»--Ա. Կոր. Դ. 5: Տէրը ի՛նք միայն գիտէ թէ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած:

Կրտսեր տղան եթէ իր հօ՛ր ունեցուածքը կերած և վատնած էր, մեծ եղբայրը ի՞նչ իրաւունք ունի դատելու իր պզտիկ եղբայրը: Պզտիկ եղբայրը իր մեծ եղբօր ծառանգութեան չէր դպած, այլ

հօ՛րը իրաւունքին: Դժբախտաբար քննադատները փոխանակ մնալու դաստիարակի իրենց բարձր դիրքին վրայ, կ'իջնեն իրենք ալ ալլասերած մարդոց մակարդակին: Հարստութեան ազահուլթիւնը հոգիին կուրուլթիւնն է:

22. «Ինչ որ իմս է՝ քուկդ ալ է»--Յ1:

Վերոյիշեալ խօսքի արտայայտութիւնը ցոյց կու տայ հայրական վեհանձնութեան կատարը: Հայր մը, որ իր ժառանգութիւնը բաժնելէն յետոյ իր երկու զաւակներուն և յուսախաբ ըլլալէն յետոյ իրեն հաւատարիմ կարծած երէց որդիէն, փոխանակ զայն յանդիմանելու, վեհանձնութեամբ կ'ըսէ անոր.

«Ինչ որ իմս է՝ քուկդ ալ է»:

Յիսուս Քրիստոս կրցաւ սոյն մեծանձնութեան յայտնաբանութիւնը ցոյց տալ "Անառակ Որդւոյն" առակին մէջ, որովհետեւ Ան ականատես եղած էր երկնքի մէջ Իր Հօր անբացատրելի սիրոյ խորութեան և անըմբռնելի ողորմութեան զգացողութեան: Վերոյիշեալ բառերը հայրական սիրոյ խորագոյն ներգործեամբ օժտուած հրաւէր մըն է իւրաքանչիւր հաւատացեալին: Երէց եղբօր նկարագրութեամբ, Յիսուս կը պատկերէ մարդկային նկարագրին վատթարագոյն գիծերը և Աստուծոյ բնութեան վեհագոյն ճառագայթները: Նոյնպէս Յիսուս կ'ուզէ տեսնել մեզմէ իւրաքանչիւրին ապրումին մէջ սոյն սիրոյ տառապանքին դիւցազնութիւնն ու յաղթութիւնը:

23. «Քու այս եղբայրդ մեռած էր և ողջնցաւ»:

Հայրը ամենա՛յն փափկանկատութեամբ վարուելով հանդերձ իր երէց որդւոյն հետ, ջանաց նաեւ կրթե՛լ զայն: Նախապէս երէց տղան բարկութեան մէջ արհամարհած էր իր կրտսեր եղբայրը կոչելով զայն "Բո՛ւ որդիդ": Հայրը չվերջացուցած իր խօսակցութիւնը երէց որդւոյն հետ կը յիշեցնէ անոր, թէ իր արհամարհած տղան ի՛ր ալ եղբայրն է, ու կ'ըսէ անոր.

**«Քու այս եղբայրդ մեռած էր և ողջնցաւ,
կորսուած էր և գտնուեցաւ»:**

Աստուած անսպառօրէն կը սիրէ մեզ և կ'ողորմի, բայց չշփացներ: Աստուած կը դաստիարակէ Իր ձեռակերտ մարդը մինչեւ

անոր արժանանալը աստուածամանութեան:

Անառակին Առակը խտացեալ յայտնութիւնն է Հայր Աստուծոյ սիրոյն և նմանութեան: Մարդկային այլազան սէրերուն մէջ՝ Աստուծոյ սէրը բառերով չի բացատրուիր, ծանրութեամբ չկշռուիր, թուանշաններով չի չափուիր և զգացումներով չի թարգմանուիր, ո՛չ ալ մարդկային բարոյականը վսեմացնող առափնութեան մը հետ կը բաղդատուի: Այս անզուգական **սէրը՝** հաւատացեալին **բուրբանութիւնը ընծայումը** դառնալու է Աստուծոյ առաքելութեան և վկայութեան համար:

Յունուար 13, 1998

Թորոնթօ

Ա Ն Ա Ռ Ա Կ Ը

Օրհնութիւնդ, Հայր, փշրած եմ կուռֆս անհանձար՝

Որ զիս խափեց չարաչար.

Ա՛լ չեմ մօտիր ես երբեք.

Որ զիս լըֆեց սովաբեկ:

Օրհնութիւնդ Հայր, ըզգըլխանփիս անդունդին

Չափած եմ խորքը մըթին.

Ա՛լ կը սոսկամ այն վայելֆէն՝ որ կիրփի

Ամպրոպներով կը մորկի:

Օրհնութիւնդ, Հայր, բոցը մարած է հրայրփիս՝

Որ մոխրակոյտ մ՛ըրաւ զիս.

Ա՛լ գիրկէտ զատ տեղ մը չ՛ունիմ ապահով՝

Ուր թաղուիմ պինդ գորովով:

Օրհնութիւնդ, Հայր խոզի լպիրշ աղտերէն

Ա՛լ սըրբուած է հոգիս,

Վարձկանդ ըլլամ ըզֆեզ պաշտեմ, Դու նորէն

Իբրեւ Աստուած օրհնէ՛ զիս:

--Եղիշէ Եպս. Դուրեան (Հովուական Սրինգ)

Ս ՈՒՐԲ Պ Ա Տ Ա Ր Ա Գ

Սուրբ Պատարագը իր խորհրդաբանական հանգամանքով, կը ներկայացնէ զգալապէս և յայտնապէս նոյնինքն մեր Փրկիչը Յիսուս Բրիստոս՝ Մարդեղեալ ԱստուածՈրդին: Եկեղեցիներու մէջ ամէն կիրակի մատուցուած Ս. Պատարագը Բրիստոսի զոհաբերութեան խորհուրդն է: Յիսուս Բրիստոս իր զոհաբերութեան խորհուրդով մեզ ալ կը հրաւիրէ զոհաբերութիւն ընել՝ ծախել մեր ունեցածը, ուրանալ մեր անձը և հետեւիլ Իրեն: Եկեղեցի ըսուածը այս իսկ է.

"Հաղորդութիւն Սրբոց":

Եկեղեցիներու մէջ ամէն Կիրակի մատուցուած պատարագը Բրիստոսի զոհաբերութեան խորհուրդն է, որ հաւատացեալներ կը փառաբանեն, կը հաղորդուին և իրենց անձը կը նուիրեն Աստուծոյ ծառայութեան:

"Պատարագ" բառը կը նշանակէ "նուէր կամ ընծայ", որ աւելի ուշ սկսաւ գործածուիլ նաեւ "ծառայութեան" համար (տեսնել Հր. Աճառյանի "հայերէն Արմատական Բառարան"): Մոգերը իրենց գանձերը բացին ու Մանուկ Յիսուսին պատարագ՝ ընծայ մատուցին ոսկի, կնդրուկ և զմուռս: Սուրբ Խաչելութեամբ, Յիսուս բացաւ իր Սի՛րտը բոլոր մարդոց առջեւ, որպէս Քաւչարար և շնորհաբաշխ Փրկիչ:

Բրիստոս երբ աշխարհ մտաւ՝ իր Ս. Ծնունդ Մարդեղութեամբ, ըսաւ.

«Զոհեր և պատարագներ չուզեցիր, այլ պատրաստեցիր մարմին մը ինծի համար: Քեզի հաճելի չեղան ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր: Այն ատեն ըսի. "Ահաւասիկ ես եկայ քու կամֆոյ կատարելու, ո՛վ Աստուած (ինչպէս որ իմ մասիս գրուած է օրէնքի գրքին մէջ)»-- Եբր. Ժ. 5-7:

Վերի համարին մէջ յիշուած «Քեզի հաճելի չեղան ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր»-ը կը նշանակէ թէ Յիսուս, նման Հին Կտակարանի զոհագործուող ողջակէզ մը պիտի չ'ըլլար, այլ տարբեր զոհաբերութիւն մը: Սոյն տարբերութեան համար հեղինակը կը շարունակէ ըսելով.

«Զոհեր, պատարագներ, ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր հաճելի չեղան քեզի, և դուն չուզեցիր»

Ապա կ'ըսէ.

«Ահաւասիկ կու գամ քու կամֆդ կատարելու, ո՛վ Աստուած»

--Եբր. Ժ. 8-9:

Ուրեմն ի՞նչպէս, և ի՞նչ կը նշանակէ Յիսուսի Պատարագին իմաստն ու Խորհուրդը՝ **«Քու կամֆդ կատարելու»** (զիջողութիւն և քու անհուն սէրդ ցոյց տալու) ասոյթը: Չեմ հաւակնիր ըսել թէ ես գիտեմ: Սակայն որպէս աշակերտ ու համեստ հետեւող մը Յիսուս Բրիստոսի, չեմ կրնար չխորհրդածե՛լ և չորոնել ինծի շնորհուած պարգեւներու *հոգեկան և մտածողական* պարունակին մէջ:

Ուստի, խորհրդածութիւններս կը ստիպեն զիս հարցնել: Եթէ հաճելի չե՛ն *Աստուծոյ մատուցուած զոհերն ու ողջակէզները* և Ան չուզեր ընդունիլ զանոնք: Ուրեմն ինչո՞ւ Յիսուս՝ Որդին Աստուծոյ զոհուեցաւ Խաչին վրայ:

Միթէ Աստուած հեթանո՛ս աստուածներէ՞ն մին նկատուելու է, որոնք անպայման մարդագոհութիւն կ'ուզեն...: Հեթանոս կրօնքի շրջանին *Մողոմ չաստուածը* կար, որ ապրելու համար մարդկային զոհեր կը պահանջէր: Յիսուս Որդւոյն ներկայացուցած Աստուածը՝ Հա՛յրն է համայն մարդկութեան և ո՛չ անխիղճ ու անանձնաւորեալ զօրութիւն մը միայն: Մարդեղեալ Յիսուս բացաւ զոհողութեան գերագոյն ծամբան, արիւնի ու Գողգոթայի ծանապարհով, ցոյց տալու համար ոչ միայն Ի՛ր զոհողութիւնը, այլ *նաեւ Հօր Աստուծոյ Անձնագոհութիւնն* ու սէրը ***առ աշխարհամարդը:***

Ուստի, եթէ Մարդեղեալ Յիսուսի զոհողութիւնը համահաւասար և համանման պիտի սեպենք Հին Կտակարանի զոհերուն, որոնք նուիրուած էին Աստուծոյ, ուրեմն Մեր Յիրոջ զոհաբերութիւնը (Հօր Աստուծոյ կամֆով), որո՞ւն ուղղուած էր: Եթէ չենք կրնար սոյն հարցումին պատասխանել, ու ջանանք շղարշել զայն **"խորհուրդ"** բառով մը միայն, նախընտրելի է բնաւ չխօսիլ այդ նիւթին մասին:

Ս. Պատարագի խորհուրդին կարծ և լրիւ իմաստը՝ **«Բրիստոս պատարագուելով կը բաշխուի հաւատացեալ աղօթողներու մէջ»:** Մարդկութեան հոգին ու խիղճը ցնցելու նպատակով Յիսուս Բրիստոս կը զոհաբերէ Իր Անձը ոչ թէ Աստուծոյ, այլ՝ համա՛յն մարդկութեան: Աստուած Ի՛ր սիրոյն ու տառապանքին՝ հոգիի չարչարանքին ու վիշտին ընդմէջէ՛ն խօսելով մոլորած մարդկութեան, կը ջանայ վերադարձնել մեղանչական մարդը Իրե՛ն: Մարդ երբ ականատես կ'ըլլայ իր ահաւոր բարոյական սխալանքին և անկումին հետեւանքը, որով ան տառապեցուցա՛ծ է մարդասէր՝ Արարիչը

(Աստուած կը տառապի քանզի շատ կը սիրէ նոյնիսկ մոլորած և շփոթահար մարդ արարածը), ա՛յն ատեն կը սկսի մեղաւորին դարձը դէպի Հայր Աստուած:

Ս. Պատարագի պահուն կը կերակրուինք Քրիստոսի Մարմինով և կը հաղորդուինք Անոր Արիւնով որպէսզի մասնակից ըլլանք Իրեն: Կը մտերմանանք Անձնաւորութիւն և Հեղինակութիւն եղող Աստուծոյ հետ Իր Որդւո՛յն Քրիստոսի միջնորդութեամբ: Հաղորդուիլ կը նշանակէ ներշնչուիլ յաղթական Յարուցեալին հետ, ծանչնալ Չայն ու Անոր զօրութիւնը և **մասնակից ըլլալ Անոր տառապանքին** որպէսզի այս կերպով հասնինք մեռելներէն յարութիւն առնելու--Փիլիպ. Գ. 10-11:

Հին Կտակարանի արջառներու զոհաբերութիւնը ուղուած էր դէպի Աստուած որպէս աղօթք, աղերս ու խնդրանք մարդ արարածներու կողմէ: Իսկ Յիսուս Քրիստոսի Ս. Խաչելութեան զոհաբերութիւնը, **Աստուած կ'ուղղէ դէպի մարդը, ո՛չ դէպի Իրեն:** Ոհ, ի՞նչ հիասքանչ Արարիչ է Աստուած: Տիեզերք մը ուր 100 միլիար ծիր կաթիններ (galaxy) կան, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ աւելի քան 100 միլիար աստղ, կը յայտնացուցանեն ոչ միայն ստեղծագործ զօրութիւնը անճառելի Արարիչին, այլ Անոր անճառելի **սէրն** ու մարդու փրկագործութեան համար Ի՛ր անձնազոհողութիւնը նոյնիսկ Իր սիրելի Որդւոյն շրթներով, որ կ'ըսէ քեզի և ինծի.

**«Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինս»
«Խմեցէ՛ք անկէ ամէնքդ ալ, որովհետեւ
այդ է նոր ուխտի իմ արիւնս, որ կը
թափի շատերուն վրայ՝ մեղքերու
թողութեան համար»--Մատթ. ԻԶ. 27-29:**

Բոլոր կրօններն ու հաւատալիքները սխալ և անճիշտ հասկցած էին զԱստուած և Անոր արդարութիւնը և Անոր աղերսը մարդ արարածին հետ: Յովհաննէս առաքեալ իր աստուածայայտ իմացումով կը գրէ իր Աւետարանի առաջին գլուխ և 17րդ համարին մէջ, ըսելով.

«Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան»:

Մինչեւ Յիսուս Քրիստոս, ճշմարիտ Աստուածայայտնութիւն, մարդիկ շանացին *հաճեցնել* զԱստուած զոհելով իրենց **աւելցու-**

ԲԷՆ՝ կենդանիներեն ու հացեն: Մէ՛կ անգամ իսկ մարդ արարած չմտածեց ուրանալ՝ զոհել ինֆզինֆը՝ ի՛ր հպարտութիւնը, փառամոլութիւնը, հեշտասիրութիւնը, ատելութիւնը և վրէժխնդրութիւնը: Վերոյիշեալ պատճառներով, Մովսէսէ մօտ ութը հարիւր տարի յետոյ Ովսեայ մարգարէն կը գրէ. 2. 6:

«Քանզի ես ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զոհ,
Ու ողջակէզներէն աւելի՝ Աստուծոյ գիտութիւնը»:

Եսայի մարգարէին անունը կը նշանակէ "Եհովա փրկութիւն է": Ան ապրեցաւ Ն. Ք. 759-690 շրջանին ու մարգարէացաւ մօտ 60 տարի: Եսայի ոչ միայն ունեցաւ Հոգիին ներշնչումը, այլ նաեւ հասկցաւ սոյն յայտնութեան **իմա՛ստը** ու կոչուեցաւ "Աւետարանիչ": Եսայի մարգարէն շնորհը ունեցաւ թափանցելու Աստուծոյ խորհուրդին ու դարերու համար գանդակեց իր պատգամը ըսելով.

«Ի՞նչ պէտք է ինձի ձեր զոհերուն շատութիւնը, կ'ըսէ Տէրը.
Ձեր խոյերուն ողջակէզներէն
Ու պարարտ անասուններուն ծարպէն կշտացած եմ:
Եւ զուարակներուն ու գառներուն
Եւ նոխազներուն արիւններէն չեմ ախորժիր:
Նաեւ երբ աղօթֆնիդ կը շատցնէք, պիտի չլսեմ.
Վասնզի ձեռքերնիդ արիւնով լեցուն են»--Ա. 11, 15:

Աստուած կը հակադրէ մարդուն կեղծ, շինծու ու երեւութական զոհաբերութիւնը, Իր **ճշմարիտ ու շնորհաբաշխ** զոհաբերութեամբ: Աստուծոյ համար արդարութիւնը, ո՛չ թէ վրէժխնդրութիւն է մարդու անհնազանդութեան դէմ, այլ՝ Ան կը **ներէ** ապաշխարող ու զղջացող մեղաւորը Իր անհուն ողորմութեամբ, անսպառ սիրով ու շնորհով: Սոյն առարկայակա՛ն, շօշափելի ու տեսանելի շնորհ-ընծայումը Ան ցոյց տուաւ Գողգոթայի վրան: Ո՛չ թէ **պահանջելո՛վ** որ Յիսուս Որդին սպանուի, ու Անոր մեռած Մարմինը Իրեն ընծայուի, այնպէս ինչպէս Ակամեմնոն ըրաւ իր մատղաշ աղջիկը (Իֆիճէնեա)-ն խողխողել տալով ծովերու աստուծոյն, այլ՝ որպէսզի մե՛նք մարդ-արարածներ, Գողգոթայի Ս. Խաչելութեան մէջ տեսնե՛նք Յիսուս Որդւոյն ցաւատանջ մահը, (մարդու մեղանչումին *որպէս հետեւանք*) և Հօր Աստուծոյ անհանգրուան և անվախճան սէրը, զղջա՛նք, ապաշխարենք ու հաղորդուելով Պատարագեալին Մարմնոյն ու Արիւնին, ստանանք

յաւիտենական կեանք:

Յիսուսի կրօնփին հիմնաքարը սէրն է, ու շաղախը՝ զոհաբերութիւն: Ան երջանկացուցած է բոլոր հաւատացեալները: Յագեցուցած է բոլոր հոգեկան ծարաւները: Ոգեկան հաց է դարձած բոլոր Ձինք սիրողներուն: Յիսուս ջո՛ւր հրամցուց ծարաւին, հաց՝ քաղցածին, բժշկութիւն՝ հիւանդին, յոյս՝ սրտաբեկին ու յետոյ բեկանելով Իր Մարմինն ու Արիւնը սրբարար Խաչելութեամբ, բաշխեց Ձայն բոլորին: Տալն ու տրուելը սիրո՛յ արտայայտութիւններ են: Յոյսի և գոյատեւման: Մարդեղեալ Յիսուս **մեռնելով** կրցաւ բաշխել Իր Ս. Մարմինը քեզի և ինձի: Այդ սրբազան Ընծայումի ընդմէջէ՛ն Ան ըսաւ աշակերտներուն, **«Առէ՛ք, և կերէ՛ք»** - Յով. 2. 54-59.

«Ես եմ կենդանի հացը որ իջած է երկինքէն. եթէ մէկը այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չուտէք Մարդու Որդիին Մարմինը, և չըմպէք Անոր Արիւնը՝ ձեր մէջ կեանք չէք ունենար»: Ով որ կ'ուտէ իմ Մարմինս և կ'ըմպէ Իմ Արիւնս՝ յաւիտենական կեանք ունի. և ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր»:- Յով. 2. 47- 63:

Պատարագի Սուրբ Հաղորդութեան պահուն, Յիսուս պատուէր մը կու տայ աշակերտներուն, որ թէեւ անտեսուած է սակայն չափազանց խորիմաստ է: Ան կ'ըսէ. Ղուկ. ԻԲ.19:

«Այս բանը ըրէք Իմ յիշատակիս համար»:

Ի՞նչ կը նշանակէ **"Այս բանը ըրէք"** պատուէրը: Հպանցիկ ակնարկով այնպէս կը թուի մեզի, թէ ամէն անգամ որ մասնակցինք Ս. Հաղորդութեան Ձինք յիշենք: Իրաքանչիւր հաղորդուող, ժամ մը Ս. Պատարագի ներկայ ըլլալէն յետոյ, անկասկած Ձինք յիշելո՛ւն համար կը հաղորդուի, և ոչ ուրիշ նպատակով: Միթէ Մեր Տէրը Ա՛յդքան փառասէր էր որ Ձինք յիշելու համար ընենք: Ո՛չ, այլ **"այս բանը ըրէք"** պատուէրը ունէր նաեւ խորասոյզ խորհուրդ մը:

(Յետագայ խորհրդածութիւններս համեստ մտածումներ են միայն, ու ո՛չ վարդապետութիւններ):

«Այս բանը ըրէք»-ը ոչ թէ միայն պատարագող քահանային Ս.

Հաղորդութիւն *մատակարարե՛լն* է հաւատացեալներուն, այլ բոլոր հաւատացեալները, որոնք ծաշակելով կը մասնակցին Յիսուսի Բեկանեալ Մարմնին, իրենք զիրենք պարտաւորութեան կ'ենթարկեն "ըրէֆ"ի մը, որուն նպատակը կը գտնուի մի միայն յիշել մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոսի **արա՛րքը**:

Հաւատացեալը, Յիսուսի աշակերտողը **ուխտաւոր** մը կը դառնայ ծաշակելով Անոր Մարմինը: Ան Մովսէսի Օրէնքին հետեւող մը չէ՛ այլեւս, այլ իր Տիրոջ Յիսուսի: Մարդեղեալ Յիսուսի վերջին արարը եղաւ **բեկանուիլ՝ կոտորտուիլ և մեռնիլ**: Ուստի ամէն անգամ որ հաւատացեալ մը կը մասնակցի Տիրոջ Մարմնին ու Արիւնին, պարտ է յիշել ու գիտնալ, թէ ինք աշխարհի վրայ իր իրաւունքը փնտռելու չէ՛: Իր արժանապատուութիւնը պարտ է կոտրել: Իր եսը պէտք է ուրանալ: Ինչո՞ւ, որովհետեւ մասնակցելով Ինքզինքն զոհաբերո՞ղ Տէր Յիսուսի, հաւատացեալը կ'ուխտէ մասնակցիլ ու շարունակել իր Տիրոջ չարչարաններուն և անձնուրացութեան, որպէս վկայ մը:

Յիսուս Զրիստոս Իր զոհաբերութեան խորհուրդով մեզ ալ կը հրաւիրէ զոհաբերութիւն ընել: Ծախել ունեցածը, հետեւիլ Իրեն, և ուրանալ անձը:

Կը խոստովանիմ թէ շատ դժուար է ուրանալ մեր իրաւունքը: Սակայն պատուէրը Անկէ է, որ ուրացա՛ւ Իր իրաւունքը ու մեր ֆաւութեան համար յանձն առաւ բեկանուիլ և կոտորտուիլ: Հետեւաբար, սոյն պատուէրը ունի իր մէջ նաեւ պարզ պատասխանը, որ է.

«Այս բանը ըրէ՛ք իմ յիշատակիս համար»:

Այսինքն, Ձիս կրնաք յիշել մի միայն երբ *դուք եւս յանձն կ'առնէք բեկանուիլ և կոտորտուիլ նման Ինծի*, կ'ըսէ Յիսուս մեր Փրկիչը և մեր Տէրը:

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
«ԱՌԷՔ ԿԵՐԷՔ Ա՛ՅՍ
Է ՄԱՐՄԻՆ ԻՄ»:**

ՊԱՏԱՐԱԳԵԱԼ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ

«Դուն որ նիւթերուն մէջ ամենէն նիւթականն ես:

Դուն մեր երգն ես, մեր կանչը, մեր գաղափարը, իդէալը,
իմաստը, գաղափարաբանութիւնը: Մեր ուժը:

Դուն մեր ամենէն հոգեկանն ես:

Դուն՝ ամենէն շօշափելին, նաեւ՝ անտեսանելի կապը
հայրերուս, նախնիներուս, ցրուած արենակիցներուս
հետ:

Դուն՝ այսօրուան աղօթքս:

Պարզէ՛ անբացատրելի խորհուրդը այդ հրաշքիդ:

Քու բեկանեալ Մարմինին:

Ով անթափանց, փակ խորան, խորհրդաւոր աշխարհ:

Հրաշքները բացատրութիւն չունին:

Եթէ ունենային՝ արդէն հրաշք չէին ըլլար»:

Նոյեմբեր 22, 1997

Թորոնթօ